ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

PGG III: Հանուն բարեկարգ կառավարման գործընկերություն (Երրորդ փուլ, 2023-2027)

Իրականացման ժամանակահատված: 01.03.2023 - 28.02.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 15 000 000

Ընդհանուր բյուջե: € 19 300 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of Europe

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/partnershipgovernance/, https://twitter.com/CoE_EU_PGG

Նախագծի կայքէջ: partnership-governance-eu.coe.int

Նախագծի նկարագրություն:

Բարեկարգ կառավարման գործընկերությունը (PGG) տարածաշրջանային ծրագիր է, որի նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրների ազգային օրենսդրության և գործելակերպի համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին՝ ելնելով յուրաքանչյուր երկրի առանձնահատուկ կարիքներից։
PGG III-ը հիմնվում է նախորդ երկու փուլերի արդյունքների վրա՝ հատկապես արդարադատության բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի, խտրականության կանխարգելման և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտներում։ Երկրային հատուկ նախաձեռնությունները լրացվում են տարածաշրջանային գործողություններով՝ ծրագրի առաջնահերթ ուղղությունների շրջանակում։ Բոլոր գործողությունները հիմնված են Եվրոպայի խորհրդի փորձագիտական կարողությունների վրա՝ աջակցելով շահագրգիռ կողմերին համապատասխանել կազմակերպության չափանիշներին մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտներում։
PGG III-ի պլանավորումը նաև հաշվի է առել Ուկրաինայի, Մոլդովայի Հանրապետության և Վրաստանի նպատակները՝ կապված ԵՄ թեկնածուի կարգավիճակի հետ (Ուկրաինայի և Մոլդովայի Հանրապետության դեպքում) և եվրոպական հեռանկարի հետ (Վրաստանի դեպքում)։
Ծրագիրը կշարունակի աջակցել Հայաստանին և Ադրբեջանին, ինչպես նաև նախատեսում է համագործակցության խթանում Բելառուսի ժողովրդավարական ուժերի և քաղաքացիական հասարակության հետ։

Ակնկալվող արդյունքներ:

1. Աջակցել, որպեսզի Արևելյան գործընկերության երկրների օրենսդրությունն ու գործելակերպը առավել մոտենան եվրոպական չափանիշներին՝ PGG III-ի առաջնահերթ ոլորտներում։ Դրանք ներառում են արդարադատության համակարգի ամրապնդումը, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը, հավասարության և խտրականության բացառման խթանումը, ինչպես նաև կանանց արդարադատության հասանելիության բարելավումն ու նրանց նկատմամբ բռնության կանխարգելումը՝ բարեկարգ կառավարման շրջանակում։
2. Զարգացնել տարածաշրջանային համագործակցությունը՝ խթանելով փորձի և գիտելիքի փոխանակումը, տեղեկատվության ազատ շրջանառությունը և մասնագիտական կապերի ամրապնդումը։
3. Ապահովել առաջնահերթ բարեփոխումների համար անհրաժեշտ իրավական խորհրդատվություն՝ եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխան, Արագ արձագանքման մեխանիզմի միջոցով, որը հասանելի է գործընկեր երկրներին։
4. Ամրապնդել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները՝ մարդու իրավունքների և գենդերային հավասարության խթանման, ինչպես նաև խտրականության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ուղղությամբ՝ նպաստելով բարեկարգ կառավարման զարգացմանը։